Տ. ԱՐՇԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(մարտի 10, 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, այսօր Մեծ պահքի հինգերորդ կիրակին է։

Պատկերավոր, գեղարվեստական մտածողությամբ ասվում է, որ Մեծ պահքը ճամփորդություն է։ Եւ եթե այդպես է, ապա կիրակիներն այդ ճամփորդության կանգառներն են՝ հիմնական հանգրվանները։ Եւ յուրաքանչյուր կիրակի ունի իր առանձնահատուկ խորհուրդը։ Այսօրվա կիրակին կոչվում է Դատավորի կիրակի։ Իհարկե, շատ մարդիկ՝ մանավանդ դատավորները, մտածում են, որ կիրակին նվիրված է հենց դատավորներին, բայց իրականում այն աղոթքի կարեւորության բացահայտմանն է վերաբերում։ Դատավորի կիրակի է կոչվում, քանի որ այսօրվա համար մեր հայրերն ընտրել են մի հատված՝ ամփոփված Ղուկասի Ավետարանի ԺԸ. գլխում, որը կոչվում է Անիրավ դատավորի եւ այրի կնոջ առակ, որի բովանդակությանը, վստահ եմ, շատերդ ծանոթ եք։ Առակը, որպես այդպիսին, լրացուցիչ մեկնաբանության կարիք չունի, քանի որ Քրիստոս Ինքն արդեն առակի մեջ բացահայտում է նրա նպատակը՝ մշտապես աղոթելն ու չձանձրանալը։ Սա է առակի հիմնական պատգամը։

Առակում պատմվում է, որ կար մի դատավոր, որը քաղաքում արդարադատություն էր իրականացնում։ Եւ շատ ծանր բնորոշում է տալիս Քրիստոս դատավորին. «Աստծուց չէր երկնչում եւ մարդկանցից չէր վախենում»։ Կարծում եմ՝ կհամաձայնեք, որ բնորոշումը խիստ ծանր է։ Հնարավո՞ր է գտնել բարի բան մի տեղում, ուր Աստծուց վախ չկա։ Բավական չէ, որ դատավորն Աստծուց չէր վախենում, ավելին՝ նա անգամ իր վարքի եւ հեղինակության նկատմամբ բացարձակապես անտարբեր էր. իր համար միեւնույն էր՝ մարդիկ իր մասին ինչ կմտածեն, ինչպիսին կլի-

նի իր համբավը, արդյո՞ք ընկալելի կլինի իր վարքագիծը մարդկանց։ Ուրեմն՝ դատավորի կերպարի բացահայտումից հետո ավետարանիչը բացահայտում է նաեւ այրի կնոջ կերպարը։ Ասում է, որ նույն քաղաքում ապրում էր մի այրի կին։ Գիտեք, որ այրի կանայք այդ ժամանակաշրջանում, ինչպես որբերը, ամենախոցելի խավին էին պատկանում։ Եւ ասում է՝ այս այրի կինը մի խնդիր ուներ իր թշնամու հետ, վեճ ուներ, իսկ այդ վեճը ո՞վ պետք է լուծեր։ Բնականաբար՝ քաղաքի դատավորը։ Եւ ավետարանիչը պատմում է, որ այնքան համառությամբ, հետեւողականությամբ, նպատակասլացությամբ նա դիմեց դատավորին, որ դատավորը, որ անխիղճ էր եւ ոչ ոքի հեղինակությունը չէր ճանաչում՝ ո՛չ Աստծու, ո՛չ մարդկանց եւ ո՛չ էլ նյութական շահագրգռվածություն ուներ, ստիպված է լինում այս կնոջ խնդիրը բավարարել։ «Բավական է այլեւս, այս կինը հոգիս հանեց, ձանձրացրեց, ես այս կնոջ դատը վերջնականապես լուծեմ, որպեսզի այլեւս դադարի ինձ անհանգստացնել»,— ասում է դատավորը։

Հիմա Քրիստոսի ընդհանրացումը լսենք։ Ասում է՝ այրի կինն այդ դատավորին դիմեց այնպիսի հետեւողականությամբ ու համառությամբ, որ վերջինս ստիպված եղավ իր հոգին ազատելու համար կնոջն ընդառաջել։ Եթե այս անխիղճ դատավորն է մարդկանց խնդրանքներին ու աղերսներին ընդառաջում, ուրեմն իմացեք՝ Աստված, որ բարեգութ է, մեր բոլորի Հայրը, ինչպե՞ս կարող է անտեսել մեր խնդրանքները, անտարբեր լինել, ինչպե՞ս կարող է Աստված տեսնել մարդու խնդրանքը, ամենօրյա աղոթքը, աղաչանքը, պաղատանքը, տառապանքը եւ անտարբեր մնալ մարդկանց խնդրանքներին։ Եւ պատգամն այս առակի այն է, ինչ որ սկզբում արձանագրեցի. պետք է մշտապես աղոթել եւ չձանձրանալ։

Հիմա հարց է առաջանում՝ ինչո՞ւ պետք է աղոթել, ո՞ւմ պետք է աղոթել։ Մենք լսել ենք, եկեղեցիներում մշտապես ասվում է՝ աղոթք արեք։ Մենք եկեղեցիներում աղոթքներ ենք անում, ժամերգություններ եւ Պատարագներ ենք կատարում, հորդորում ենք մարդկանց տներում աղոթել։ Դժբախտաբար, ժամանակակից հասարակության մեջ շատ մարդիկ կան, որ մտածում են՝ աղոթքը տկարության, թուլության, միջնադարյան ինչ-որ ըմբռնումների դրսեւորում է, եւ շատերը զորեղ, ամենակարող երեւալու նպատակով ոչ միայն չեն աղոթում, այլ նաեւ աղոթքը համարում են թույլերի եւ խեղճերի գործ։ Բայց մի՞թե Աստված մեզ կոչում է խեղճության, թուլության, տկարության։ Իհարկե, ո՛չ։

Ինչ է ասում Քրիստոս։ Ղուկաս ավետարանչի նույն՝ ԺԸ. գլխում Քրիստոս ասում է, որ մարդկությունն անցել է երկար ճանապարհ, տեսել է Նոյին։ Երբ Նոյը տապան էր կառուցում՝ ջրհեղեղից փրկվելու համար, մարդիկ ուրախանում էին, կառուցում էին, զվարճանում էին, նշանները կարդալու կարողություն բացարձակապես չունեին, չէին կանխազգում վերահաս վտանգը եւ պատուհասը, մինչեւ այն պահը, երբ Նոյը տապան մտավ։ Ամենքը կորսվեցին, իսկ Նոյը փրկվեց։ Հետո անդրադառնում է Սոդոմի ու Գոմորի կործանման պատմությանը։ Ասում է՝ Սոդոմի ու Գոմորի կործանման դատավճիռն արդեն կար, բայց մարդիկ տակավին շարունակում էին խմել, ուտել, ամուսնանալ, բաժանվել, զվարճանալ մինչեւ այն պահը, երբ Սոդոմն ու Գոմորը կործանվեցին։ Փրկություն գտավ միայն Ղովտն իր ընտանիքով։ Դրանից հետո Ղովտի կինը, խախտելով Աստծու պատվիրանը, եւս արժանացավ կործանվողների ճակատագրին։

Ուրեմն ինչ էր ուզում ասել Քրիստոս այս ամենով։ Ուզում էր ասել, որ պետք է մշտական աղոթքի, աղոթական կապի մեջ լինել Աստծու հետ՝ հասկանալու համար ժամանակի նշանները, հասկանալու համար մեր առօրյա կյանքում տեղի ունեցող իրադարձությունները եւ մշտապես պարզ, վճիտ հայացքի առջեւ ունենալու համար այն վերջնահանգրվանը, ինչին որ մենք ձգտում ենք։ Իսկ ինչին ենք մենք ձգտում։ Այո՛, եթե համարենք, որ մեր կյանքը սահմանափակված է ծնունդից մինչեւ մահ ընկած ժամանակահատվածով, իհարկե, կարող ենք ասել, որ մեզ ո՛չ աղոթք, ո՛չ զղջում, ո՛չ ապաշխարություն, ո՛չ զրկանքներ են պետք. ուտենք, խմենք, ուրախանանք։ Բայց արդյո՞ք այդպես է։ Եթե այդպես լիներ, մենք չէինք հավաքվի այս եկեղեցիներում։ Իհարկե, մենք հավատում ենք, որ մեր կյանքը միայն ծնունդից մինչեւ վախճան ընկած ժամանակահատվածը չէ, սա ընդամենը մի տեսանելի կարճ դրվագն է այն հավերժական կյանքի, որը մեզ խոստացել է Տերը։ Եւ մենք պետք է աղոթենք՝ չկորցնելու համար կապն Աստծու հետ, հասկանալու համար Աստծու կամքը։ Ինչի՞ համար պետք է աղոթել, արդյո՞ք Սուրբ Գիրքը, որ մեզ տրված է, բավարար չէ ընթերցելու, Աստծու կամքը հասկանալու համար։ Բայց մոռանում ենք, որ Սուրբ Գիրքն ընթերցել կարողանալու համար եւս շնորհ է պետք, Սուրբ Գրքի պատգամները հասկանալու համար աղոթել է պետք, Սուրբ Գրքի պատգամների եւ գաղափարների վրա կենտրոնանալու համար էլ է պետք աղոթել։ Առավել եւս՝ պետք է աղոթել կյանքի այնպի-

սի դրվագներում, երբ Աստծուց առանձնահատուկ պատգամների եւ ուղերձներ կարիք ունենք։

Ահա այս պատճառով է, որ այս կիրակին մեր հայրերը նվիրել են աղոթքին. մի կարեւոր գաղափար, առանց որի՝ անհնար է լինել քրիստոնյա, մի առանցքային անհրաժեշտություն, առանց որի՝ հնարավոր չէ քրիստոնեական կյանքով ապրել։ Լինել քրիստոնյա եւ չաղոթել նշանակում է նմանվել արեւի, որը չունի ո՛չ ճառագայթներ, ո՛չ ջերմություն, ո՛չ էլ լուսավորություն։

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, ահա ինչու մենք մշտապես պետք է ջանանք աղոթել։ Իհարկե, ոչ միշտ է, որ ստացվում է դա անել։ Երբեմն մեր առօրյա հոգսերը, մեր մտածումները, պարտականությունները ուղղակի խեղդում են մեր ազնիվ մղումը՝ աղոթելու, Աստծու հետ կապ ստեղծելու։ Բայց սա էլ պայքար է, հոգեւոր պայքար, եւ մենք պիտի կարողանանք ձերբազատվել այդ հոգսերից, այդ մտահոգություններից, որովհետեւ հոգսերին ու մտահոգություններին տրվելով՝ դրանցում խեղդվելու ենք։ Աղոթքը հնարավորություն է վեր բարձրանալու առօրյա հոգսերից, մտահոգություններից, տանջանքներից, տառապանքներից։ Հատկապես այսօր, երբ մեր կյանքը լի է մտահոգություններով, չորս բոլորը տառապանքներ են։ Արդյոք այդ մտահոգություններին տրվելով՝ մենք կհաղթահարե՞նք դրանք, արդյոք այդ հոգսերին կուլ գնալով՝ մենք կձերբազատվե՞նք այդ հոգսերից։ Իհարկե, ո՛չ։ Մենք ընդամենը հոգսին՝ հոգս, մտահոգությանը՝ մտահոգություն, տառապանքին՝ տառապանք, եւ լացին՝ լաց կավելացնենք։

Ուրեմն այդ տառապանքներից, հոգսերից, մտահոգություններից ազատվելու համար պետք է աղոթքով վերանալ մռայլ իրականությունից։ Պետք է զղջալ, բայց չհուսահատվել, պետք է գնահատել իրավիճակի բարդությունները, եւ աղոթքի միջոցով հաղթահարել դրանք։ Ահա այս պատճառով է, որ այրի կնոջ այդ համառությունը, հետեւողականությունը մեզ ամենքիս պետք է։ Մենք համառորեն պետք է ձգտենք պայքարել մեր մտահոգությունների, մեր հոգսերի, մեր խնդիրների դեմ՝ առանց նույնանալու դրանց հետ։ Խնդիրները, մտահոգությունները լուծվում են աղոթքների միջոցով։ Եւ հավատացեք՝ թեեւ մեզ թվում է, որ ոչ միշտ ենք մեր աղոթքի պատասխանն ստանում, բայց կարեւորագույն ցուցիչը, որ մեր աղոթքը տեղ է հասել, դա մեր հոգու թեթեւությունն է, հոգու հանգստությունը, որը շոշափելիորեն եւ առարկայորեն ցույց է տալիս, որ, այո՛,

մեր աղոթքը հասել է Աստծուն, եւ Աստված մեզ հոգեւոր հանդարտություն ու հանգստություն է պարգեւել։

Մաղթում եմ, որ ապաշխարության այս շրջանում, Մեծի պահոց այս ճամփորդության շրջանում մենք մտածենք աղոթքի կարեւորության մասին եւ մտածելուց զատ՝ աղոթենք։ Աղոթել հնարավոր է ամենուր։ Եկեղեցիներում մենք կատարում ենք արարողություններ, շատերը մասնակցում են այդ արարողություններին, բայց աղոթել հնարավոր է ամենուր՝ թե՛ տանը, թե՛ դրսում, թե՛ քնելիս, թե՛ արթնանալիս, ինչպես Շնորհալի Հայրապետը կասեր, թե՛ պառկած, թե՛ կանգնած, թե՛ նստած. աղոթքը հնարավոր է մատուցել ամեն ժամ, ամեն տեղ, ամեն վիճակում։

Թող Աստված այդ շնորհը պարգեւի մեզ, որպեսզի կարողանանք մեր մտքի շղարշը, այդ մեղքերի, մտահոգությունների շղարշը վերացնել եւ պարզ մտքով հաղորդակցվել Աստծու հետ։

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամէն»։